

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ ԷԴՎԱՐԴԻ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ  
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 1918-1920 ԹԹ.**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2021**

**Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնում:**

**Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Վիրաբյան Վանիկ Հրանտի**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Ստեփանյան Խաչատուր Ռոստոմի**

**պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Սուքիասյան Համո Կարենի**

**Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական  
համալսարան**

**Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. ապրիլի 30-ին, ժամը  
15<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության  
004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ  
Բաղրամյան 24/4):**

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գրադարանում:**

**Սեղմագիրն առաքվել է 2021 թ. մարտի 15-ին**

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ**

**Մուրադյան Հ. Ղ.**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Հայ-վրացական հարաբերությունների արդի ընթացքը և զարգացման միտումները այն կարևոր իրողություններից են, որոնցից կախված է երկու հարևան ժողովուրդների բնականոն զարգացումը, միջպետական հարաբերությունների նոր որակը:

Ռուսաստանում տեղի ունեցած 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումն ու հաջորդած դեպքերը իրենց անջնջելի կնիքը թողեցին Անդրկովկասում ազգային պետությունների ձևավորման, 1918 թ. մայիսին անկախության հռչակման խորքային գործընթացների վրա:

« Կետաքաղաքական համակարգի կայացման գործընթացներին զուգընթաց ջանքեր գործադրվեցին այլ պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Արտաքին աշխարհի հետ հարաբերությունների ապահովման առումով միանգամայն կարևորվեցին Թիֆլիսում, Փարիզում, Թեհրանում, Հյուսիսային Կովկասում հիմնված դիվանագիտական ներկայացուցչությունները, Բաթումիում, Փոթիում, Սուխումիում, Վլադիկավկազում, Դոնի Ռոստովում և այլուր բացված հյուպատոսությունները: Մասնավորապես կարևորվեց թիֆլիսյան դիվանագիտական կառույցի դերը: Ըստ այդմ նրա դերը հայ-վրացական հարաբերություններում կարևորվեց, այդ թվում 1918 թ. դեկտեմբերյան բախմամբ ծագած լարվածության մեղմացման գործում: Այն կապող օղակ էր ոչ միայն անդրկովկասյան տարածաշրջանի, այլև Անտանտի երկրների, Ռուսաստանի և նրա հարավի պետքաղաքական կառույցների հետ: Փաստերը վկայում են, որ « կառավարությունը անհրաժեշտ տեղեկությունները գլխավորապես ստանում էր Թիֆլիսում գործող դիվանագիտական ներկայացուցչության և նրան ենթակա հյուպատոսական ծառայությունների միջոցով, որին էապես նպաստում էր Տեղեկատվական բյուրոյի, ինչպես նաև ներկայացուցչության կազմում գտնվող զինվորական կցորդի գործունեությունը: Այն ապահովում էր պարենային-առևտրական հաղորդակցությունը և ռազմական բեռնափոխադրումը Վրաստանից Հայաստան:

Այսօր Առաջին հանրապետության իր նշանակությամբ ու գործառույթներով թերևս ամենակարևոր քաղաքական-դիվանագիտական կառույցներից մեկի՝ Վրաստանում « ներկայացուցչության գործունեության անհայտ էջերի ուսումնասիրման ու ընդհանրացման հարցը կարևորվում է արդի գործընթացների ու Առաջին հանրապետության պատմության առավել ամբողջացման տեսանկյունից:

Այդուհանդերձ, « ներկայացուցչության գործունեությունը շատ ընդհանուր և հպանցիկ է շոշափվել, և առ այսօր որևիցե ամբողջական, ընդհանրացնող աշխատության, որը կընդգրկեր Թիֆլիսում « ներկայացուցչության գործառույթները 1918-1920 թվականներին՝ գործնականում չի կատարվել և սույն ատենախոսությամբ խնդիր է դրվել առավելագույնս համակողմանի հետազոտել առաջադրված թեման, լրացնել առկա բացը, քանի որ առ այսօր նման գիտական հետազոտություն չի եղել և դեռ չկա:

**ԼՊԱՏԱԿ և ԽՆԴԻՐՆԵՐ:** Ատենախոսությունում գլխավոր նպատակն է եղել հետազոտել Վրաստանում « դիվանագիտական ներկայացուցչության համակարգի ձևավորման և կայացման դեռևս չլուսաբանված գործընթացները.

1. « դիվանագիտական ներկայացուցչության ձևավորման, պաշտոնական մակարդակով բացման գործընթացը և հետագա քայլերը.

2. Ներկայացուցչության գործունեությունը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին նախորդած դիվանագիտական հակամարտության օրերին.

3. Ներկայացուցչության ձեռնարկած քայլերը 1918 թ. վրաց-հայկական պատերազմի օրերին.

4. Ներկայացուցչության գործունեությունը 1919 թ. հունվարյան հայ-վրացական կոնֆերանսի ժամանակ.

5. Ներկայացուցչության դերը Վրաստանում և մասնավորապես Ծալկայի ու Բակուրիանի շրջաններում ապաստանած գաղթականության առջև ծառայած խնդիրները լուծելու գործում.

6. Ներկայացնել ներկայացուցչության գործունեությունը Թիֆլիսում գտնվող հայկական գույքի, և առաջին հերթին ռազմական ունեցվածքի, հայ զինվորության Հայաստան շուտափույթ տեղափոխման, զինակոչի կազմակերպման և այլնայլ խնդիրների լուծման գործում.

7. Բացահայտել ներկայացուցչության դերը 1919 թ. հունիսի վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի կնքման ժամանակ.

8. Հետազոտել պատերազմին հաջորդած փուլում դիվանագիտական կապերի վերականգնման և 1919 թ. մարտին Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության վերաբացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը.

9. Ներկայացուցչության գործունեությունը հետպատերազմյան ժամանակահատվածում առևտրատնտեսական կապերի կարգավորման, տարանցման ապահովման և պարենային խնդիրների լուծման գործում.

10. ՀՀ ներկայացուցչության ջանքերը հայ-վրացական ռազմաքաղաքական համագործակցության, կամ պաշտպանական միության ձևավորման ուղղությամբ և դրանց ձախողման պատճառները.

11. Ներկայացնել ներկայացուցչության աշխատանքները 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ հեղինակը հենվելով արխիվային չօգտագործված և նորովի շրջանառված նորահայտ նյութերի, հուշագրության, մամուլի ու պատմագիտական առկա գրականության և այլ վավերագրերի վրա, առաջին անգամ հատուկ և ամբողջական հետազոտման է ենթարկել դեռևս չլուսաբանված թեմա՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը միջպետական, ազգամիջյան, ռազմաքաղաքական հարթություններում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը շարադրելիս հիմք է ընդունվել պատմական անաչառությունը և անկողմնակալությունը, ոչ կուսակցական մոտեցումը: Ցուցաբերվել է պատմահամեմատական, քննական-վերլուծական մոտեցում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Ատենախոսության շարադրանքը ժամանակագրական առումով ընդգրկում է Առաջին Հանրապետության տարիները՝ 1918-1920 թվականները:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ) ֆոնդերն են: Դիտարկված հիմնահարցի տեսանկյունից մասնավորապես կարևորվել են ՀՀ ազգային արխիվի 198 (ՀՀ խորհրդարան), 199 (Նախարարների խորհուրդ), 200 (ՀՀ ԱԳ

նախարարություն), 275 (276) (Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն), 368 (Բաթումի հյուպատոսություն) և այլ ֆոնդերը: Ատենախոսության համար որոշակի արժեք են ներկայացրել նաև մամուլի և այլ բնույթի նյութերը:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական նշանակություն՝ հնարավորություն տալով պարզաբանել ՀՀ համար կենսական Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության գործառույթների հիմնական ուղղությունները և ձեռք բերված արդյունքները, որոնք կարող են օգտագործվել հատուկ մշակումների և դասընթացների համար: Ուսումնասիրության նյութերը կարող են օգտագործվել ՀՀ ԲՈՒՀ-երի մասնագիտական ամբիոնների կողմից՝ հատուկ դասընթացների կազմակերպման ժամանակ:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի նիստում: Հիմնական դրույթները ներկայացվել են ատենախոսի կողմից հեղինակած հոդվածներում:

**ԽՆԴԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:** Առաջադրված խնդիրները արժևորելու տեսանկյունից ուշադրություն է դարձվել ժամանակաշրջանը արտացոլող մի շարք փաստաթղթերի ժողովածուների և հրապարակումների վրա՝ որոնք հնարավորություն են տալիս պատկերացնելու, թե ինչպիսի միջազգային-քաղաքական իրավիճակում է գործել ՀՀ ներկայացուցչությունը: Հետազոտմանը նպաստել են նաև անմիջականորեն թեմայի հետ չառնչվող մի շարք նյութերի և փաստաթղթերի հավաքածուներ<sup>2</sup>: Ատենախոսության համար կարևոր հիմք են հանդիսացել նաև ժամանակի մամուլում հրապարակված նյութերը:

Որպես կարևոր աղբյուր միանգամայն արժևորվում է Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության խորհրդական Մ. Թոմանյանի աշխատանքը, որը նվիրված է Առաջին հանրապետության դիվանագիտական պատմությանը, որում սակայն առանձին պատմագիտական անդրադարձ ներկայացուցչության բազմաբնույթ գործառույթներին՝ չկա, այլ ընդամենը մի շարք կարևոր բնութագրիչ փաստեր և իրավիճակների ներկայացում, որոնք նպաստել են հիմնախնդրի ամբողջացմանը<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (Կազմ.՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան (ղեկավար), Վ. Մելիքյան և ուրիշներ), Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000: Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ. /զլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայ. ազգ. արխիվ, 2009: Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ. / զլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Եր., Հայ. ազգ. արխիվ, 2014 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлиси, Типог. Прав. Груз. Республ., 1919, Изъ истории армяно-грузинских отношений. 1918 годъ (пограничные конфликты: переговоры: война: соглашение), Тифлиси, Гос. типог., 1919: Германские оккупанты в Грузии в 1918 году. Сб. документов и материалов. Сост. Габричидзе М. М., Тбилиси, Госиздат Груз. ССР, 1942: Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917-1921 гг.). Сост. С. Д. Беридзе, Тбилиси, Гос. изд-во «Сабчота Сакартвело», 1958:

<sup>3</sup> Տե՛ս Тумаян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., Ер., Нац. архив Армении, 2012:

Թեմայի հետազոտման տեսանկյունից առանձնանում է սկզբնաղբյուրների ուսումնասիրման բնագավառում զգալի ներդրում կատարած Հ. Սուքիասյանի<sup>4</sup> խմբագրությամբ և առաջաբանով հրատարակված Մ. Հարությունյանի նամակները և զեկուցագրերը ամփոփող ժողովածուն, որում դիտարժան մանրամասներ կան՝ կապված Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ստեղծման և հավատարմատարների գործունեության հետ<sup>5</sup>: Դիտարժան է Հ. Սուքիասյանի խմբագրությամբ կազմված փաստաթղթերի մեկ այլ ժողովածու ևս, որը հնարավորություն է տալիս ներկայացնել ներկայացուցչության ստեղծման և գործունեության պատմության մի շարք կողմեր: Պատմաբան Հ. Սուքիասյանի կողմից գիտական շրջանառության մեջ դրված մի շարք արխիվային հրատարակումները վերաբերում են Լոռու Չեզոք գոտու, Բորչալուի գավառի, Ախալքալաքի և առհասարակ 1918-1921 թթ. պատմության տարաբնույթ հարցերին, որոնք խնդրի բազմակողմանի վերհանման տեսանկյունից զգալի պատմագիտական արժեք են ներկայացնում<sup>6</sup>:

Հետազոտական առումով կարևորվում են Ս. Վրացյանի, Հովհ. Քաջազունու, Ա. Ջամալյանի, Ռ. Տեր-Մինասյանի, Ալ. Խատիսյանի, Արտ. Բաբայանի, Հ. Սառիկյանի և այլոց գործերը<sup>7</sup>: Սկզբնաղբյուրային նշանակություն ունի Փարիզի վեհաժողովում Վրաստանի պատվիրակության իրավախորհրդատու Զ. Դ. Ավալովի (Ավալաշվիլու) աշխատանքը<sup>8</sup>:

---

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու/ կազմող, առաջաբանի և ծանոթագր. Հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, երկրորդ լրացված և բարեփոխ. հրատ., Եր., Հայ. ազգ. արխիվ, 2009:

<sup>5</sup> Հարությունյան Մ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1919 թվականներին (նամակներ, զեկուցագրեր), Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2017:

<sup>6</sup> Տե՛ս Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г.- январь 1921 г.), կազմող՝ Հ. Սուքիասյան, «Պատմաբանասիրական հանդես», 2010, N 1, էջ 253-262, նույնի՝ Հայ-վրացական սահմանավեճը փաստաթղթերի լեզվով, կազմ. Հ. Կ. Սուքիասյանը, «ՎԷՄ», համահայկական հանդես, Դ (Ժ) տարի, 2012, թիվ 4 (40), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 194-216, նույնի՝ Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918թ. դեկտեմբեր-1919 թ. մարտ). Կազմ.՝ Հ. Սուքիասյան, «Պատմաբանասիրական հանդես», 2009, N 1, էջ 185-206:

<sup>7</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան» հրատ., 1993: Քաջազունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս. Վիեննա, Մխիթարեան տպ., 1923: Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիղը, «Հայրենիք», 1928: Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հատոր Է. Գ հրատ., Թեհրան, 1982: Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ տպագր., Բէյրութ, տպ. Համազգ., 1968: Բաբայան Արտ., Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլենդէլ, «Նավասարդ» հրատ., 1997: Բաբայան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959: Սառիկյան Հ., Հիշողություններ. 1878-1924, հրատ. են պատ.՝ Ա. Վիրաբյանը, Էդգ. Հովհաննիսյանը, Եր., Հայ. Ազգ. արխիվ, 2015 և այլն:

<sup>8</sup> Տե՛ս Авалов З. Д., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг. Воспоминания. Очерки, Париж, 1924:

Մի շարք պատմաբանների, հասարակական-քաղաքական գործիչների կողմից ներկայացուցչության գործունեությանը առնչվող ընդամենը հպանցիկ ակնարկներ կան՝ կապված 1918-1920 թթ. ազգամիջյան քաղաքական զարգացումների հետ<sup>9</sup>:

Հիմնահարցի հետ որոշակի եզրեր ունեն *Լեոյի*<sup>10</sup> (Առաքել Բաբախանյան) փաստերով և եզրահանգումներով ինքնատիպ աշխատությունները:

Հիմնահարցի հետազոտման ոլորտում որոշակի ներդրում են ակադ. Ա. Մելքոնյանի մի շարք միանգամայն արժեքավոր աշխատությունները<sup>11</sup>, որոնց առանցքակետը հայկական Զավախքի հիմնախնդիրներն են, սակայն որոնցում հատուկ խնդիր չի դրվել հատուկ հետազոտման ենթակելի ՀՀ ներկայացուցչության գործունեության հարցերը, թեկուզև կան մասնավորապես Ա. Զամայանի և այլոց գործունեության դիտարկման առանձին դիտարժան փաստեր:

Անշուշտ, թեմայի հետազոտման տեսանկյունից միանգամայն կարևորվում են պրոֆեսոր Ա. Հայրունու մենագրությունը և այլ հրապարակումներ<sup>12</sup>, որոնցում հանգամանալից վերլուծվել են Անդրկովկասում Գերմանիայի արտաքին քաղաքականության մի շարք կարևոր կողմեր:

Միանգամայն արժևորվում են Վ. Վիրաբյանի<sup>13</sup> մենագրությունները, որոնցում հետազոտվել են հայ-վրացական քաղաքական-ռազմական առճակատման մի շարք կարևոր դրվագներ, այդ թվում հետպատերազմյան զարգացումները և կողմերի քայլերը՝ կարգավորելու միջպետական հարաբերությունները՝ որոշակի առումով չանտեսելով նաև ՀՀ ներկայացուցչության գործունեությանը վերաբերող մի քանի հարցեր, սակայն հատուկ խնդիր չդնելով առանձին և ամբողջական հետազոտման առարկա դարձնել Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության գործունեությունը:

---

<sup>9</sup> Տե՛ս Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., Гос. изд-во, 1929: Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922 թթ., Եր., «Միտք» հրատ., 1967: Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., Բարձրագույն դպրոց, 1997: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:

<sup>10</sup> Տե՛ս Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ Թիֆլիս, «Խորհրդ. Կովկաս», 1925, Եր., «Շեն» հրատ., 2009: Լեո, Սահմանավեճեր. Լոռի. Ախալքալաք. Ղարաբաղ, Թիֆլիս, հրատ. Հայ Հայր. Միութ. Կենտ. խորհրդի, տպ. «Աշխատատը», 1919:

<sup>11</sup> Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Զավախք: Պատմության ուրվագծեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999: Տե՛ս նաև Մելքոնյան Ա., Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003:

<sup>12</sup> Տե՛ս Հայրունի Ա., Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Եր., ԵՊՀ, 2013: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը գերմանա-թուրքական հարաբերությունների համաձորում, «Վեն», Ժ (ԺԶ տարի), 2018, թիվ 4 (64.) հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 98-111:

<sup>13</sup> Տե՛ս Վիրաբյան Վ. Հ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Եր., «Ասողիկ» հրատ., 2003: Նույնի՝ Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., ԵՊՀ հրատ. 2016 Նույնի՝ Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռվա Չեզոք գոտին 1920-1921 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2016:

Գ. Պեպրոսյանի<sup>14</sup> աշխատությունները ևս քննարկվող հիմնահարցի մի շարք կողմերի լուսաբանման առումով զգալի հետաքրքրություն են ներկայացնում, այդ թվում վրաց-հայկական պատերազմի, դիվանագիտական-քաղաքական հարաբերությունների և Անդրկովկասի նկատմամբ Ա. Դենիկինի ռազմավարության այս կամ այն ելևէջումների վերաբերյալ: Կ. Սարգսյանի մենագրություններում որոշ դիտարկումներ, արժևորումներ և տեղ-տեղ հակասական, վիճարկելի տեսաքաղաքական մոտեցումները ևս օգտակար են եղել, որոնք վերաբերվում են 1918-1921 թթ. հայ-վրացական հարաբերությունների բարդույթին<sup>15</sup>:

Կ. Խաչատրյանի, Ա. Հակոբյանի, Հ. Սուքիասյանի, Բ. Մայիլյանի ու այլոց մի շարք աշխատություններ և հոդվածներ ևս իրենց վրա են բևեռում պատմաբանների ուշադրությունը, քանզի դրանցում կան հետաքրքիր դիտարկումներ և փաստեր՝ կապված հայ-ռուսական հարաբերությունների, Լոռի-Ախալքալաքի հիմնախնդրի, ազգամիջյան հակամարտությունը առաջ բերած գործունեների հետ, որոնք հանգեցրին քաղաքական քարտեզի նոր վերաձևումների Անդրկովկասում<sup>16</sup>:

Հայ-վրացական հարաբերությունների բացահայտման, իրարամերժ մոտեցումների համադրման տեսանկյունից դիտարկվել են նաև մի շարք վրաց հեղինակների՝ Վ. Ի. Աղամիայի, Ա. Ի. Չոխեբու, Գ. Ուրատաձեի և այլոց աշխատությունները<sup>17</sup>: Ընդհանուր բնույթի մի շարք հարցեր կեղծ դիրքերից են ներկայացվում Գ. Ռ. Մարխուլայի<sup>18</sup>, Ան-

---

<sup>14</sup> Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի Հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), Եր., ԵՊՀ հրատ., 2003, 2005: Տե՛ս նույնի Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2011: Պետրոսյան Գ., Անդրկովկասը դիվանագիտական հորձանոտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար -1918 թ. հունիս), Եր., ԵՊՀ հրատ., 2018:

<sup>15</sup> Տե՛ս Սարգսյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր.: «Նաիրի» հրատ., 2003: նույնի՝ Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (Ինչպե՛ս կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), Եր., «Նաիրի» հրատ., 2007:

<sup>16</sup> Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007: Հակոբյան Ար., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1921 թթ.), Եր., ՀՅԴ հրատ., 2005, նույնի՝ Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1992, Եր., 2018. Սուքիասյան Հ., Հայաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական կապերի վերականգնման հարցը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող շրջանում. Մերձավոր Արևելք. Պատմություն. Քաղաքականություն. Մշակույթ. Հոդվածների ժողովածու, հ. IX-X, Եր., ՀՀ ԳԱԱ արևելագիտ. ին-տ, 2014, էջ 543-555: Մայիլյան Բ., Վրաստանի Հայոց ազգային խորհրդի գործունեության պատմությունից (1918 թ. օգոստոս -1921 թ. փետրվար), 2011, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 61-83: Маилян Б. В., Краткий очерк изгнания армян из Джавахка в 1918 году, Седьмая годовичная научная конференция (3-7 декабря 2012 г.), часть 2. Сб. науч. статей, Ер., Изд-во РАУ, 2013, с. 72-84:

<sup>17</sup> Տե՛ս Адамия В. И., Из истории английской интервенции в Грузии (1918-1921 гг.), Сухуми, Абгосиздат, 1961: Чохели А. И., Политика Франции в отношении Грузии в 1917-1921 годах, Тбилиси, «Мецниереба», 1980: Տե՛ս Уратадзе Г. А., Образование и консолидация Грузинской Демократической республики. Мюнхен, Ин.-т по изучению СССР, 1956 и др.:

<sup>18</sup> Տե՛ս Мархулия Г. Р., Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах (с сокращениями), Тбилиси, Тб. гос. ун-т им. И. Джавахишвили, 2007. Տե՛ս նաև <http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/>:

դերսենի և Գ. Էզգեի<sup>19</sup> աշխատանքներում՝ իրենց երբեմն սուբյեկտիվ գնահատումներով<sup>20</sup>:

Անկասկած, հետազոտված հիմնախնդրի լիարժեք լուսաբանման առումով արժեքավոր է Ռ. Հովհաննիսյանի Առաջին հանրապետությանը նվիրված քառահատոր աշխատանքը, որում իրարամերժ և վիճահարույց մոտեցումների հետ մեկտեղ, կան մի շարք դիտարժան մոտեցումներ<sup>21</sup>:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Այն բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից (11 ենթագլուխներից), վերջաբանից, աղբյուրների և գրականության ցանկից: Ուսումնասիրության ծավալը կազմում է 224 էջ (առանց մատենագրության):

**Ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նշված են ժամանակագրական շրջանակները, գիտական նորույթը, տրված են օգտագործված արխիվային ու այլ սկզբնաղբյուրները և թեմայի վերաբերյալ առկա գրականության պատմաքննական վերլուծությունը:

**ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ** «Պետականության վերականգնումը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացումն ու գործունեությունը 1918 թ. Երկրորդ կեսին: փախստականության հարցը» բաղկացած է 3 ենթագլխից:

**Առաջին ենթագլխում** ներկայացված է ՀՀ ներկայացուցչության բացման գործընթացը: Տույց է տրված, որ Թիֆլիսի Ազգային խորհրդի Երևան մեկնելուց հետո, 1918 թ. հուլիսի 22-ին, ՀՀ դիվանագիտական կապեր է հաստատել Վրաստանի հետ: Այս առումով ուշագրավ է Հովհ. Քաջազնունու 1918 թ. հուլիսի 22-ի դիմումագիրը Վրաստանի ԱԳ նախարարին, որով Արշակ Զամայանը նշանակվում էր Վրաստանում ՀՀ հավատարմատար և նրան հանձնարարվում էր «կառավարության անունից վարել բոլոր բանակցությունները Վրաստանի կառավարության հետ՝ ինչպես քաղաքական բնույթի, այնպես էլ ընթացիկ կյանքի, տնտեսական, իրավական և ցանկացած այլ հարցերով»<sup>22</sup>: Ներկայացուցչության խորհրդական Մ. Թումանյանը պնդում է, որ *Զամայանի գործունեությունը որպես Թիֆլիսում ՀՀ հանձնակառարի սկսվել է դեռ 1918 թ. հուլիսի 13-ին, որի մասին նրան տեղեկացրել է Ալ. Խաչիսյանը և այն շարունակվել է մինչև դեկտեմբերի 22-ը*<sup>23</sup>, երբ հայ-վրացական հարաբերությունները

<sup>19</sup> Տե՛ս Արդերսեն Է., Էգգե Գ., Արմյանո-Գրուզինական պատերազմը 1918 թ. և Արմյանո-Գրուզինական տարածքային հարցը XX դարում: Արմյանո-Գրուզինական պատերազմը 1918 թ. և Արմյանո-Գրուզինական տարածքային հարցը XX դարում (на рус. и англ. яз.). Տե՛ս <http://www.conflicts.Rem33.com/images/Georgia/Armeno-Georgian-War18-R.html>: <http://iberiana.wordpress.com/armenia-georgia/armeno-georgian-war-1918-20/>:

<sup>20</sup> Տե՛ս Տամխարաձե Ն., Georgian State Border–Past and Present, Foreign policy & security programme, August 2012, p. 6-7. Տե՛ս [www.css.ge](http://www.css.ge): Կ. Կ. Բլաուվել և Քր. Բերգլունդ, Armenians in the Making of Modern Georgia. Տե՛ս [https://www.researchgate.net/publication/303920623\\_eprints.iliauni.edu.ge/4587/1/22.05.final.Berglund.pdf](https://www.researchgate.net/publication/303920623_eprints.iliauni.edu.ge/4587/1/22.05.final.Berglund.pdf): Կազեմաձե Փ., Борьба за Закавказье (1917–1921), Инс-т стратег. исслед. Кавказа, Стокгольм, CA&CC Press®, 2010:

<sup>21</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Հ. I-IV, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005-2016, Hovannisian R. G., The Republic of Armenia, vol. 1, Berkeley, Los Angeles, London: Univers. of California Press 1971, vol. 2, 1982, vol. 3, 1996, vol. 4:

<sup>22</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 26, թ. 5, ֆ. 200, գ. 1, գ. 75, թ. 1:

<sup>23</sup> Տե՛ս Կումանյան Մ., Дипломатическая история республики Армения, с. 14:

խզվեցին պատերազմով: Ձևավորվում է նաև Փոթիի հյուպատոսությունը, որը ենթարկվում էր ՀՀ հավատարմատարին: 1918 թ. օգոստոսի 3-ին Ջամալյանը Դ. Թյուրքյանին նշանակում է Փոթիի հյուպատոսական գործի ժամանակավոր վարիչ<sup>24</sup>: Դիվանագիտական ներկայացուցչության կարևորագույն մարմիններից մեկը՝ հյուպատոսական բաժանմունքը, իր գործունեությունը սկսել էր դեռ 1918 թ. օգոստոսի 19-ին<sup>25</sup>: Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության բաղկացուցիչ մասն էր Տեղեկատվական բյուրոն: Բյուրոյի վարիչ Մալխազովի՝ ԱԳ նախարարին ուղղված բացատրական գրության մեջ մանրամասն ներկայացվում են գործունեության ոլորտներն ու հիմնական նպատակները<sup>26</sup>:

**Երկրորդ ենթագլխում** վերլուծվում են ներկայացուցչության ձեռնարկած քայլերը դիվանագիտական առճակատման մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: 1918 թ. նոյեմբերի 8-ին ԱԳ նախարարին ուղարկված գաղտնի նամակում Ա. Ջամալյանը գրում է հայ-վրացական հարաբերություններում լարվածության, հայկական պահեստների, Նավթոլորում, Այրումում և Սանահինում գնացքների դեմ վրաց իշխանությունների ուռնագությունների, մյուս կողմից, «Հորիզոն» և «Աշխատավոր» թերթերի բուռն արտահայտությունների մասին վրաց կառավարության դեմ ի պաշտպանություն հայ գաղթականների, խուզարկությունների և մասնավորապես Կարճիկյանի տանը՝ զենք գտնելու պատրվակով, որի հետ կապված վրաց պարլամենտում «Հորիզոնի» և դաշնակցության մյուս օրգանների կողմից մի հարցապնդում էր արվել: Ներկայացված է հավատարմատարի կողմից գործադրված ջանքերը բորբոքված կրքերը հանգստացնելու ուղղությամբ<sup>27</sup>:

Այդ ընթացքում լարվածությունը էլ ավելի է աճում: 1918 թ. դեկտեմբերի 20-ին Եվգ. Գեգեչկորին հայտնում է Ջամալյանին, որ Դրոյից պաշտոնական հաղորդագրություն են ստացել, որ նշանակում է ռազմական գործողություններ ընդդեմ Վրաստանի հանրապետության, որ *այդ պահից սկսած դիվանագիտական հարաբերությունները համարում է ընդհատված, և հայտնում, որ Ջամալյանը տեղյակ պահի իր կառավարությանը, որ ետ է վերադարձվում հուլիսի 22-ին հանձնված հավատարմագիրը*<sup>28</sup>: Դրանով դեկտեմբերի 18-ից ժամանակավորապես փակվում է ՀՀ ներկայացուցչությունը Վրաստանում, իսկ Ա. Ջամալյանը վերադառնում է Երևան:

**Երրորդ ենթագլխում** ընդգծված է, որ ՀՀ ներկայացուցչության համար օրակարգային գաղթականության հարցերի մասին: Այդ մասին է փաստում թիֆլիսաբնակ ախալքալաքցիների 1918 թ. օգոստոսի 10-ի հարցադիմումը, ըստ որի առաջարկվում էին այլ հարցերի հետ միասին *Ախալքալաքի գավառում նույնիսկ ունենալ դիվանագիտական ներկայացուցիչ* և այլն: Այդ հոգսը ծանրացավ Վիրահայոց ազգային խորհրդի և Ա. Ջամալյանի վրա<sup>29</sup>:

Հայ գաղթականների հայրենի բնակավայրերը վերադարձի ճանապարհին վրացական իշխանությունների հարուցած արգելքների մասին է փաստում 1919 թ. նոյեմբե-

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 82, թ. 1:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 275, ց. 5, գ. 33, թ. 75-77:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 209:

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, թ. 119:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 75, թ. 15-16:

<sup>29</sup> Տե՛ս Մելքոնյան Ա, նշվ. աշխ., էջ 294-295:

րին Ա. Զամայանի հղած հեռագիրը Գերմանա-հայկական ընկերության նախագահ Ջեյմս Գրինֆիլդին<sup>30</sup>:

Թ. Բլաուվելտը և Բ. Բերգլանդը փաստելով, որ հայերը Զավախքում ու Ախալցխայում 72,3 տոկոսն էին՝ կազմելով մեծամասնություն, նշում են, որ այդուհանդերձ Վրաստանը մշտապես մերժում էր թուրքական սպանդից փրկված հայերին ապաստան տալ Ախալցխայքում և Ախալցխայում, պարտադրելով նրանց հանգրվանել Սիբիրը հիշեցնող Բակուրիանի բարձրավանդակի անտառներում, որտեղ 30 հազարը մահանում են<sup>31</sup>:

«Հ ներկայացուցությունը մշտապես ձգտել է սատարել և աջակցել փախստականներին, բազմիցս դիմելով Վրաստանի իշխանություններին՝ ակնկալելով խելամիտ վճիռներ:

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցությունը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող ժամանակահատվածում (1919 թ. հունվար - 1920 թ. վերջ)»** բաղկացած է 4 ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում** ներկայացված է ՀՀ հաշտարար պատվիրակության բանակցային գործառույթը և դրանում ներկայացուցչության մասնակցությունը, նպատակադրվելով երկուստեք դադարեցնելու թշնամական գործողությունները ռազմական և դիվանագիտական ոլորտներում, հաստատելու երկաթուղային նորմալ հաղորդակցություն: Պատվիրակությունը 1919 թ. հունվարի 1-ից իր գործունեությունը փոխադրում է Թիֆլիս, ուր իր գործերն ավարտում է և թերի մնացածները 1919 թ. մարտի 19-ին հանձնում վերաբացված ներկայացուցչությանը: Համաձայն 1919 թ. հունվարի 17-ին պայմանագրի, ստորագրվում է փոխադարձաբար անկախությունների ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին պայմանագիր, իսկ մարտի 1-ին համաձայնություն է ձեռք բերվում փոստ-հեռագրական հաղորդակցության կարգավորման հարցում:

**Երկրորդ ենթագլխում** կարևորվում է դիվանագիտական հարաբերությունների վերականգնման գործընթացի վերհանումը: *Կարելի է հաստատագրել, որ Մ. Հարությունյանի գլխավորած հաշտարար պատվիրակությունը հունվարի 1-ից մինչև մարտի 15-ը Թիֆլիսում հանդիսացել է ՀՀ ներկայացուցչություն՝ մինչև Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը ամբողջ ծավալով*<sup>32</sup>: Մ. Հարությունյանի Ս. Տիգրանյանին ուղղված 1919 թ. փետրվարի 17-ի և մարտի 4-ի նամակներից տեղեկանում ենք ներկայացուցչության աշխատանքների վերսկսման և հավատարմատարի խնդրում վրաց կառավարության կարծրատիպերի մասին և դեմ արտահայտվել Ա. Զամայանի վերանշանակմանը, չնայած հենց վերջինս այն կարծիքին էր, որ «*Վրաստանի հետ սերտորեն դաշնակցելու ամենից մեծ կարիքն ունենիք, որ Վրաստանն էր մեր միակ ճանապարհը քաղաքակիրթ աշխարհի հետ հաղորդակցելու համար*»<sup>33</sup>: Մարտի 6-ին ՀՀ ԱԳ նախարար Ս. Տիգրանյանը

<sup>30</sup> Տե՛ս Հայրունի, նշվ. աշխ., էջ 183:

<sup>31</sup> Տե՛ս Blauvelt T. K., Berglund C., Armenians in the Making of Modern Georgia: Տե՛ս 22.05.final. Berglund: See discussions, stats, and author profiles for this publication at. Տե՛ս <https://www.researchgate.net/publication/303920623>: eprints.iliauni.edu.ge/4587/1/22.05.final.Berglund.pdf:

<sup>32</sup> Տե՛ս Հարությունյան Մ., նշվ. աշխ., էջ 101:

<sup>33</sup> Զամայան Ա., Հ. Քաջազունին և Հ. Յ. Դաշնակցությունը, վերահրատ., Եր., Հայկ. ուսում.«Անի» հիմնադրամ, 2016, էջ 80:

տեղեկացնում է Վրաստանի կառավարությանը, որ Լ. Եվանգուլյանը նշանակված է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ՝ լիազորվելով պաշտպանել Հայաստանի շահերը<sup>34</sup>: Մարտի 8-ին Վրաստանի կառավարությունը Հայաստանին, իսկ մարտի 24-ին ՀՀ կառավարությունը Վրաստանին հեռագրեր հղեցին, հավաստելով, որ ճանաչում են միմյանց պետական անկախությունը<sup>35</sup>:

Լ. Եվանգուլյանը պարտականությունները կատարում է մինչև 1920 թ. ապրիլի 9-ը<sup>36</sup>, սակայն մինչ այդ հիվանդության պատճառով մի քանի անգամ դիմում է հրաժարականի: Հենց Լ. Եվանգուլյանի և Գ. Մախարաձեի գործուն մասնակցությամբ 1919 թ. նոյեմբերի 5-ին Թիֆլիսում ստորագրվել է ՀՀ համար կենսական ազատ տարանջման մասին պայմանագիրը՝ առանց մաքսատուրքի՝ 3 տարի ժամկետով: 1919 թ. վերջերին Լ. Եվանգուլյանը պաշտոնից հրաժարվում է: 1920 թ. մարտի 30-ին ԱԳ նախարար Ալ. Խատիսյանը Վրաստանի ԱԳ մինիստր Եվգ. Գեգեչկորուն հայտնում է Լ. Եվանգուլյանի պաշտոնաթողության մասին, տեղեկացնելով, որ ժամանակավորապես դիվանագիտական ներկայացուցչության տեղակալի պարտականությունները դրվել են Մ. Թումանյանի վրա<sup>37</sup>:

**Երրորդ ենթազվիտում** հետազոտված է ՀՀ ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում հյուպատոսական համակարգի ձևավորման գործում: 1919 թ. փետրվարի 9-ին Եվանգուլյանը հայտնում է, որ ստացել է Բաթումիի ընդհանուր հյուպատոսին ուղղված ԱԳ նախարարության հեռագիրը Սոչիում հյուպատոսարան բացելու մասին: Նշելով, որ մի քանի ամիս առաջ արդեն մտադրություն կար Սոչիում և Սուխումիում (Աբխազիա) հիմնել հյուպատոսություններ, սակայն քաղաքական նկատառումներով որոշվել է այն հիմնել միայն Սուխումիում, և նոյեմբերի 1-ից հյուպատոս նշանակել Վ. Սահակյանին, որին Վրաստանը չի առարկում<sup>38</sup>: 1919 թ. հուլիսի կեսերին ՀՀ ԱԳ նախարարը դիմում է հավատարմատարին աջակցելու Սուխումիում հյուպատոսարան բացելու խնդրում: ԱԳ նախարարին հղած 1920 թ. փետրվարի 24-ի գեկուցագրում Լ. Եվանգուլյանը կրկին անդրադառնում է Սոչիի և Սուխումիի խնդրին, հայտնելով, որ առայժմ պետք է հաստատել Սուխումիի հյուպատոսին: Սակայն հաշվի առնելով, որ Սոչիի շրջանը ապստամբվելով, բաժանվել էր Կամավորական բանակից, ՀՀ կառավարությանը անհրաժեշտ էր գտել Հակոբյանին հաստատել իբրև Սոչիի շրջանի հյուպատոս, կամ էլ նշանակել մի նոր անձի՝ համապատասխան հրահանգները տալով Բաթումիի ընդհանուր հյուպատոս Հ. Չմշկյանին<sup>39</sup>: Ինչպես տեսնում ենք ՀՀ դիվանագիտական համակարգը Վրաստանում բավականաչափ ձևավորված էր, համակարգված էր և փորձում էր լուծել հայությանը հուզող հարցերը:

**Չորրորդ ենթազվիտում** ցույց է տրված, որ Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչության կարևորագույն առաքելություններից էին անշուշտ, պարենային, առևտրային հարաբերությունների կարգավորման, և տարանցիկ ուղիների կենսապահովման հարցերը: Հենց դա նկատի ուներ Ա. Զամալյանը. «1918 թ. աշնանը...Վրացական իշխա-

<sup>34</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 31, 72-74, գ. 26, թ. 131:

<sup>35</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 249-250, 266:

<sup>36</sup> Տե՛ս Туманян М., указ. соч., с. 20, ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 357, մաս I, թ. 48:

<sup>37</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 520, թ. 148-149:

